

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՄՈՍԿՎԱ
(20—23 հունվար 1993 թ.)

Ժամանում. 20 հունվար, չորեքշաբթի

20 հունվարի, ժամը 15-ին, իր շքախմբով Մոսկվա ժամանեց Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա. Հայրապետը՝ ուղեկցությամբ Տ. Պարգև եպիսկոպոս Մարտիրոսյանի, Տ. Վազգեն աբեղա Միրզախանյանի, պրն. Լյուդվիգ Խաչատրյանի և Նոր Նախիջևանի ու Ռուսաստանի Հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Տիրան եպիսկոպոս Կյուրեղյանի:

Մոսկվայի «Շերեմետևո-1» օդանավակայանում Վեհափառ Հայրապետին դիմավորեցին և ողջույնի ու բարիգալստյան խոսքեր ասացին Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմի Թեմական Խորհրդի անդամներն ու ատենապետը, թեմի հոգևոր դասը և Հայաստանի Հանրապետության մշտական ներկայացուցիչ Ֆելիքս Մամիկոնյանը:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը իր շքախմբով ուղևորվեց Մոսկվայի «Մետրոպոլ» հյուրանոց:

Նույն օրը, ժամը 17-ին, Վեհափառ Հայրապետը պաշտոնական հանդիպում ունեցավ Ռուսաստանի վարչապետ Վիկտոր Չերնոմիրդինի հետ: Հանդիպմանը ներկա էին գերշ. Տ. Տիրան եպիսկոպոս Կյուրեղյանը, Թեմական Խորհրդի անդամ պրն. Սերժ Ջիլավյանը, ատենապետ պրն. Կամո Ուղումյանը և պրն. Ֆելիքս Մամիկոնյանը: Հանդիպման ժամանակ Վեհափառ Հայրապետը Ռուսաստանի վարչապետին հանգամանալից կերպով ներկայացրեց Հայաստանի սոցիալ-տնտեսական ծանր դրությունը և խնդրեց Ռուսաստանի կառավարությունից տնտեսական օգնություն ցույց տալ Հայաստանին:

Վարչապետ Չերնոմիրդինը իր խոսքի մեջ նշեց, որ ինքը ծանոթ է Հայաստանի բարդ կացությանը և իր պատրաստակամությունը հայտնեց ամեն հարցով օժանդակելու Հայաստանին:

Խոսվեց նաև ճանապարհների շրջափակման մասին: Ռուսաստանի կառավարության ղեկավարը հայտնեց, որ նոր ճանապարհներ են որոնվում դեպի Հայաստան առաքվող բեռների համար:

Երեկոյան ժամը 20-ին Վեհափառ Հայրապետը պրն. Սերժ Ջիլավյանի առանձնատանը հանդիպում ունեցավ Մոսկվա քաղաքի քաղաքապետ Յուրի Լուժկովի և Մոսկվայի նախկին քաղաքապետ Գավրիլ Պոպովի հետ: Հանդիպումը տեղի ունեցավ շատ ջերմ և մտերմիկ մթնոլորտում: Հանդիպման ընթացքում Վեհափառ Հայրապետը կրկին անդրադարձավ Հայաստանի տընտեսական ծանր իրավիճակին:

Քաղաքապետ Լուժկովը պատրաստակամություն հայտնեց Հայաստանին օգնելու ալյուրով, կարտոֆիլով և այլ սննդամթերքներով: Սակայն նա ևս նշեց, որ ամբողջական օգնությանը խոչընդոտում է ճանապարհների շրջափակումը:

Հանդիպման ընթացքում քննարկվեց նաև Մոսկվայում հայկական նոր եկեղեցի կառուցելու հարցը: Յուրի Լուժկովը իր համաձայնությունը տվեց եկեղեցու կառուցման համար հող տրամադրել Մոսկվա քաղաքի կենտրոնական մասում:

Հանդիպմանը ներկա էին նաև գերշ. Տ. Տիրան եպիսկոպոս Կյուրեղյանը, գերշ. Տ. Պարգև եպիսկոպոս Մարտիրոսյանը և պրն. Սերժ Ջիլավյանը:

21 հունվար, հինգշաբթի

Առավոտյան ժամը 11-ին Վեհափառ Հայրապետը Կրեմլում պաշտոնական հանդիպում ունեցավ Ռուսաստանի փոխնախագահ Ալեքսանդր Ռուցկոյի հետ:

Հանդիպմանը մասնակցում էին Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Տիրան եպիսկոպոս Կյուրեղյանը, Արցախի թեմի առաջնորդ գերշ. Տ. Պարգև եպիսկոպոս Մարտիրոսյանը, Հյուսիսային Կովկասի հայոց առաջնորդական փոխանորդ Տ. Եզնիկ վրդ. Պետրոսյանը, պրն. պրն. Սերժ Ջիլավյանը, Կամո Ուդումյանը և Ֆելիքս Մամիկոնյանը:

Հանդիպման ընթացքում քննարկվեցին Լեռնային Ղարաբաղի և Հայաստանի ներկա բարդ ու դժվարին կացությունները: Հայոց Հայրապետը իր խոսքում ի մասնավորի կանգ առավ Արցախյան խնդրի խաղաղ կարգավորման և արցախահայության արդար իրավունքների հարցին:

Փոխնախագահն այս հարցերում մեղադրեց նախկին ԽՍՀՄ պրեզիդենտ Միխայիլ Գորբաչովին և, դիմելով Վեհափառ Հայրապետին, ասաց, որ նման իրավիճակում խաղաղարարական մեծ դեր կարող են ունենալ Եկեղեցին և հոգևորականությունը: Նա ասաց, որ պահն է, երբ Ռուս Եկեղեցին էլ իր ձայնը պետք է միացնի Հայ Եկեղեցուն, որպեսզի միասնական ուժերով ելք որոնեն՝ դուրս գալու տիրող իրավիճակից:

Իր խոսքի մեջ Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Տիրան եպիսկոպոս Կյուրեղյանը անդրադարձավ Հյուսիսային Կովկասի հայության կացությանը և տիրող հակահայկական տրամադրություններին: Փոխնախագահը հայտարարեց, որ ինքն անձամբ կզբաղվի այդ հարցով և պաշտոնական բարձր մակարդակով կքննի իրավիճակը:

Նույն օրը, ժամը 13-ին, Վեհափառ Հայրապետը Սուրբ Դանիլով վանքում հանդիպում ունեցավ Ռուս Պրավոսլավ Եկեղեցու Պատրիարք Ալեքսի Բ-ի հետ:

Հանդիպման ջերմ մթնոլորտում եղբայրական սիրո խոսքերով իրար դիմեցին երկու հովվապետերը: Հանդիպման ընթացքում երկու Եկեղեցիների պետերը կարևոր մի հայտարարություն ստորագրեցին:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՆՈՐ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ Տ. ՏԻՐԱՆ
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԿՅՈՒՐԵՂՅԱՆԻ ԵՎ ԱՐՑԱԽԻ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ Տ. ՊԱՐԳԵՎ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ ՀԵՏ

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՍԵՐԺ ՋԻԼԱՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳԻՄՆԱԶԻԱՅՈՒՄ

ԺԱՄԱՆԱԿԱԿՑՆՈՒ ՎԱՅՐՏՂԱԼՈՒԹՅՈՒՆ ՎՍԿԱՅ

ՄՈՍԿՎԱՅԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ԼՈՒԺԿՈՎԸ ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ՍՐԲԱՏԱՌ
ԿՈՆԴԱԿ Է ՀԱՆՁՆՈՒՄ ՏԻԱՐ ՍԵՐԺ ՋԻԼԱՎՅԱՆԻՆ՝ ՆՐԱՆ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՎ
«Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ

ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ԲԱՐԵՐԱՐ ՏԻԱՐ ՍԵՐԺ ՋԻԼԱՎՅԱՆԻ ՀԱՐԿԻ ՏԱԿ

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԵՎ ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ ՊԱՏՐԻԱՐՔ ԱԼԵՔՍԻ Բ-Ի ՀԱՄԱՏԵՂ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Մոսկվայում եղբայրական ողջագուրումներով, մենք՝ երկու հնագույն քրիստոնեական Եկեղեցիների՝ Հայ Առաքելական Եկեղեցու և Ռուս Օրթոդոքս Եկեղեցու գահակալներս, ցանկանում ենք մեր խոսքը ուղղել մեր հավատացյալ հոտին՝ համայն մերձավորաց և հեռավորաց:

Հայաստանի և Ռուսաստանի պատմությանը հայտնի են դարաշրջաններ, երբ մեր ժողովուրդները ապրում էին կա՛մ տարբեր պետություններում, կա՛մ մեկ երկրի կազմի մեջ: Սակայն մենք վկայում ենք, որ բոլոր դարերի ընթացքում մեր երկու Եկեղեցիները և նրանց ժողովուրդները ամրացված են եղել իրար բազում եղբայրական կապերով, ի Քրիստոս Հիսուս:

Մեր պատմական ընդհանրությունը, որի օգտակարությունը հաստատված է կյանքի փորձով, վեր է որևէ բաժանումից ներբերված նոր իրականությամբ: Անկախ նոր սահմանների, պետական կառավարման ձևերի և արտաքին տարբեր հանգամանքների դասավորումից, երկու Եկեղեցիների զավակների միջև հոգևոր, մշակութային և այլ կապերն ու փոխադարձ գործակցությունը կպահպանվեն և կբազմապատկվեն:

Մենք հաստատակամ ենք բոլոր քրիստոնյաների հոգևոր միասնականության և մեկ Աստուծո հավատացող բոլոր մարդկանց միջև բարի հարաբերությունների ամրապնդմանը: Այս կապակցությամբ մենք հատուկ կերպով ձգտում ենք քրիստոնյա-մուսուլմանական հարաբերությունների միջև հիմնել և հաստատուն պահել պարզ ու փոխադարձ հարգանքի ոգին:

Մեզ խորապես վշտացնում է Լեռնային Ղարաբաղում շարունակվող եղբայրասպան պատերազմը: Մենք կոչ ենք անում բոլոր նրանց, ովքեր ներգրավված են այս ընդհարման մեջ, անհապաղ դադարեցնել բոլոր ռազմական գործողությունները, որպեսզի բարդ խնդիրները լուծվեն արդարացիորեն և խաղաղ կերպով, երկխոսության ու համաձայնության հասնելու ձգտումով: Մենք նաև խնդրում ենք համաշխարհային հանրությանը՝ օգնելու Ղարաբաղի հարցի խաղաղ կարգավորմանը և ձգտելու ամեն կերպ թեթևացնել բախման զոհերի տառապանքները:

Մեր Եկեղեցիների բոլոր զավակներին, աշխարհի բոլոր մարդկանց հղում ենք խաղաղության, բարօրության և հաջողության մաղթանքներ՝ ամեն մի բարի գործում:

«Եւ ինքն Տէր խաղաղութեան՝ տացէ ձեզ խաղաղութիւն յամենայն ժամ յամենայն իրս» (Բ Թես. 3, 16):

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԱԼԵՔՍԻ Բ
ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ
ՌՈՒՍԻՈ ՊԱՏՐԻԱՐՔ

Մոսկվա,
21 հունվար 1993 թ.

Ապա տեղի ունեցավ հուշանվերների փոխանակում, իսկ վերջում Օստանկինոյի հեռուստաընկերության թղթակիցների հետ կայացավ ասուլիս:

Երեկոյան ժամը 16-ին Մոսկվայի «Մետրոպոլ» հյուրանոցի կենտրոնական սրահում Վեհափառ Հայրապետի պատվին պրն. Սերժ Ջիլավյանը մեծ ընդունելություն և ճաշկերույթ տվեց:

Սույն ընդունելությանը մասնակցում էին Համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսի Բ-ն իր շքախմբով, Մոսկվայում գտնվող բազմաթիվ երկրների դեսպաններ և դիվանագետներ, Մոսկվայի հայ համայնքի ներկայացուցիչներ՝ մտավորականներ, գիտնականներ, արվեստագետներ: Մասնակցում էին նաև ռուս մտավորականներ, քաղաքական գործիչներ, Ռուսաստանի խորհրդարանի և Մոսկվայի քաղաքապետարանի ներկայացուցիչներ՝ ավելի քան 900 հոգի:

Ընդունելության ժամանակ ողջույնի և օրհնության խոսքով ներկաներին դիմեց Հայոց Հայրապետը.

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ՃԱՇԿԵՐՈՒՅԹԻ ԺԱՄԱՆԱԿ

Մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս երկրի վրա գտնված իր վերջին օրերին հայտնեց, որ իր գնալուց հետո պիտի ուղարկի մխիթարիչ Ս. Հոգուն: Հիսուն օրեր հետո, ինչպես գիտեք, Վերնատան մեջ տեղի ունեցավ այդ հրաշալի դեպքը, որ կոչում ենք Հոգեգալուստ: Եկավ Ս. Հոգին աշխարհի վրա և մարդկանց մեջ, հատկապես առաքյալների: Եվ Ս. Հոգին առաքյալների և հաջորդող սերունդների միջոցով բոլոր ազգերի, մանավանդ եկեղեցիների վրա տարածվեց և շարունակեց գործել մինչև այսօր: Եվ մենք՝ հոգևորականներս մխիթարված ենք և հավատում ենք, որ գոնե երբեմն մենք՝ մարդիկս արժանի ենք համարվում, երկնքի կողմից Ս. Հոգին այցելում է մեզ և գործում: Ես համարում եմ այսօրվա այս պահը այդպիսի սուրբ պահ, երբ իսկապես բոլորս ներշնչված ենք Ս. Հոգով:

Այս զգացմունքներով նախ ես ողջունում եմ այստեղ ներկայությունը մեր սիրեցյալ հոգևոր եղբոր՝ Նորին Սրբություն Ալեքսի Պատրիարքի: Ողջունում եմ այստեղ գտնվող Ռուսաստանի ֆեդերացիայի պետությանց կամ քաղաքային իշխանությանց բոլոր ներկայացուցիչներին: Ողջունում եմ տարբեր երկրների դեսպաններին կամ նրանց ներկայացուցիչներին: Ողջունում եմ բազմաթիվ մտավորականներին հայ կամ ռուս, որոնք գտնվում են այս հարկի տակ: Վերջապես թույլ տվեք իմ ողջույնը բաշխել ձեզ բոլորիդ, իմ սիրելի տիկիններ և պարոններ, որ գտնվում եք այստեղ:

Աստուծո օրհնությամբ ես առաջին սպասավորն եմ Հայ Առաքելական Եկեղեցու, 37 տարիներից ի վեր, իմ պատմական Աթոռն ունենալով Հայաստանի մեջ՝ Ս. Էջմիածնում: Ս. Էջմիածին, որ կենտրոնն է համայն հայ հավատացյալ ժողովրդի և Հայ Եկեղեցու, ոչ միայն Հայաստանի, այլ նաև ամբողջ աշխարհի: Ինչպես գիտեք երևի Եվրոպայում, Մերձավոր Արևելքում և Հարավային ու Հյուսիսային Ամերիկաներում Հայ Եկեղեցին տարածված է իր ժողովրդով՝ մոտ երկու միլիոն հավատացյալներով: Եվ քրիստոնեական հավատքի լույսով նրանք կապված են Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հետ, որ աշխարհի հնագույն եկեղեցական կենտրոններից մեկն է հանդիսանում Դ դարու սկզբից ի վեր: Եվ այդ դարերից մինչև այսօր, հայ ժողովուրդը, հակառակ տեսակ-տեսակ փորձությունների և դժվարությունների, մնաց հավա-

տարիմ Քրիստոսի Լույս Ավետարանին և միշտ քարոզեց սեր ու խաղաղություն ժողովուրդների միջև և մարդկանց միջև:

Այդ ոգով է շարունակում առաջնորդվել Հայ Առաքելական Եկեղեցին և այսօր նաև ձեր ծառան՝ Հայոց Պատրիարքը: Դարերի ընթացքում Հայ Առաքելական Եկեղեցին տևապես եղբայրական սիրո հարաբերությունների մեջ է եղել բոլոր քրիստոնյա եկեղեցիների հետ: Հայ Եկեղեցին ընդհանրապես եղել է լայնախոհ և ազատամիտ և այդ եղբայրական սիրո հարաբերությունները պահպանել է ոչ միայն քրիստոնյա, այլ նաև ոչ քրիստոնյա, հատկապես մահմեդական ժողովուրդների հետ: Ինչ վերաբերում է հատկապես մահմեդական կրոնքին կամ հարաբերություններին, պետք է ասենք, որ դրանք պատմության ընթացքին զարգացած են և Կովկասում և Մերձավոր Արևելքում արաբական և մուսուլմանական տարբեր երկրներում:

Իհարկե Հայ Առաքելական Եկեղեցու՝ քույր Եկեղեցիների հետ հարաբերության ճանապարհին առավել մոտիկություն, եղբայրություն, գործակցություն զարգացել է Ռուս Պրավոսլավ Եկեղեցու հետ: Այս պատմական գործընթացը զարգացել է հատկապես վերջին երեք հարյուր տարիների ընթացքում, և ես երջանիկ եմ, որ այդ ավանդությունը պահպանվում է մինչև մեր օրերը և իրականացվում է մեր Ռուս Պրավոսլավ Եկեղեցու եղբայրական հարաբերությունների միջոցով: Իմ այս անգամվա այցելությունն ունի այս իմաստը, առավել ամրապնդել մեր եղբայրական սիրո հարաբերությունները Ռուս Պրավոսլավ մեծ Եկեղեցու հետ:

Ես այսօր շատ երջանիկ եմ, որ Ս. Դանիլով վանքում մենք առանձին հանդիպում ունեցանք Նորին Սրբություն Ալեքսի Բ Պատրիարքի հետ՝ ջերմ խոսակցության մթնոլորտի մեջ և վերջում ստորագրեցինք համատեղ մի հայտարարություն՝ ուղղված մեր ժողովուրդներին:

Ես այս երկու օրերի ընթացքում շատ գոհ եմ, որ պատեհությունն ունեցա հանդիպելու նաև Ռուսաստանի ֆեդերացիայի բարձրաստիճան ղեկավարների հետ, հատկապես փոխնախագահի և վարչապետի հետ, ապա նաև Մոսկվայի քաղաքապետի հետ: Այս առիթով ես պարտք զգացի, իբրև Հայ Եկեղեցու գլուխ, իմ երախտագիտությունը հայտնել Ռուսաստանի ֆեդերացիայի Հայաստանին մատուցած բոլոր օգնությունների համար:

Ինչպես գիտեք, Հայաստանը ավելի քան երկու տարի է, բավական ծանր վիճակի մեջ է գտնվում ձեզ ծանոթ Լեռնային Ղարաբաղի դժբախտությունների հետևանքով: Այն սարսափելի երկրաշարժը, որ Հայաստանում տեղի ունեցավ չորս տարի առաջ, երբ ավելի քան 30 հազար հայեր զոհվեցին և ավելի քան հինգ հարյուր հազար հայություն և գաղթականություն տակավին չունեն իրենց սեփական բնակարանները: Սա հետևանքն է այն շրջափակման, որին ենթակա է այսօր Հայաստանը: Եվ մենք շնորհակալ ենք բոլոր այն օգնությունների համար, որ ստանում ենք Ռուսաստանից և եղբայրական նախկին խորհրդային հանրապետություններից, և արտասահմանյան տարբեր երկրներից, Եվրոպայից և Ամերիկայից:

Հույս ունենք և հավատում ենք, որ այս դժվարությունները կարճ կտևեն և կհասնենք խաղաղության ափին: Հատկապես աղոթող ենք իբրև հոգևորականներ, որ ղարաբաղյան խնդիրը լուծվի խաղաղ բանակցություններով և փոխադարձ հասկացողությամբ:

Ադրբեջանի հետ մենք պատմական դրացի ժողովուրդներ ենք և որևէ իմաստ չունի, որ երկու կողմից մեր ժողովուրդների զավակները զոհեն իրենց կյանքը և արյունը: Ես կուզեի այս առիթով հայտնել ձեզ, որ Եկեղեցիների

Համաշխարհային Խորհրդի նախաձեռնությամբ, ես իբրև հայոց Կաթողիկոս Ժնևում մի քանի օրից պիտի հանդիպեմ Ադրբեջանի Ճեյխ ուլ իսլամի հետ: Ես հույս ունեմ, որ մեր հանդիպումները և միատեղ աղոթքները ինչ որ չափով պիտի նպաստեն, որպեսզի արդար և խաղաղ մի լուծում գտնի դարաբաղյան ողբերգական հարցը:

Այսօր ես ուզում եմ անդրադառնալ մի պահ Ալեքսեյ Բ Պատրիարքի հետ մեր հանդիպումին: Մենք քննարկեցինք նաև մեր Եկեղեցիների ապագա գործակցության հարցը: Ես շատ ուրախ եղա, որ Նորին Սրբությունը պատրաստակամություն հայտնեց ապագային անձամբ այցելել Ս. Էջմիածին՝ Հայաստան: Մենք սիրով և բաց սրտով սպասում ենք անհամբեր և կարոտով նրա ժամանումին Հայաստան և Ս. Էջմիածին: Ես կարծում եմ, որ մեր երկու Եկեղեցիների սերտ հարաբերությունը և համատեղ գործակցությունը ապագային կարևոր չափով իրենց նպաստը կբերեն ռուս և հայ ժողովուրդների դարավոր բարեկամության շարունակությանը:

Պատմությունը երբեք չի մոռացվի և ինչ պայմաններ էլ, որ ստեղծվեն, բարեկամության այդ ճանապարհը կշարունակվի:

Ճշմարիտ է, որ վերջին երկու-երեք տարիներում Հայաստանում իրադարձությունների և ներքին հուզումների առիթով խոսվեց, որ իբր հայ ժողովուրդի մեջ հակառուսական տրամադրություններ կան: Իրականությունն այն է սակայն, որ հայ ժողովուրդը վերապահումներ և դժգոհություններ ուներ, բայց ոչ ռուս ժողովրդից, այլ վերապահություններ և դժգոհություններ ուներ վարչահրամայական ռեժիմի հանդեպ, աթեիստական գաղափարախոսության հանդեպ, որից դժգոհ էր և ինքը ռուս ժողովուրդը կարծեմ: Բայց ահա այդ շփոթությունը հիմա վերացված է և ճանապարհը լայն բացված, որպեսզի ազատ Հայաստանը վերականգնի և պիտի հիմնական կերպով շարունակի իր եղբայրական բարեկամությունը և գործակցությունը Ռուսաստանի Ֆեդերացիայի և ռուս ժողովրդի հետ:

Ահավասիկ այն մի քանի մտածումները և խոհերը, որ ուզեցի ձեզ հետ բաժանել այսօր: Ես կուզեի նաև այս առիթով իմ գնահատանքը հայտնել Մոսկվայի հայ համայնքին, թեմական խորհրդին և առաջնորդին՝ իրենց ժրաջան գործունեության համար, որպեսզի նորից վերականգնվի և առավել ամուր հիմքերի վրա կազմակերպվի Հայ Եկեղեցին ամբողջ Ռուսաստանի Ֆեդերացիայի տարածքի վրա: Հատկապես իմ գոհունակությունը կուզեմ հաղորդել թեմական առաջնորդին՝ Տ. Տիրան սրբազանին, թեմական խորհրդի անդամներին, որոնք կազմակերպեցին իմ այցելության ծրագիրը Մոսկվայում: Հատկապես իմ գնահատանքը պիտի հայտնեմ թեմական խորհրդի անդամ պրն. Սերժ Ջիլավյանին, որ կազմակերպիչն է մեր հանդիպումին այստեղ Մետրոպոլում: Պրն. Ջիլավյան մի սքանչելի անձնավորություն է թե իբրև քրիստոնյա, թե իբրև հայ մարդ, թե իբրև քաղաքացի Ռուսաստանի Ֆեդերացիայի և իբրև նվիրատու բարերար Մայր Աթոռ Ս. Էջմիածնի:

Երբ երկու շաբաթ առաջ ինքը գտնվում էր Մայր Աթոռ Ս. Էջմիածին, ես իրեն պարգևատրեցի Ս. Գրիգոր Լուսավորչի շքանշանով: Այսօր ես հետս բերել եմ համապատասխան շքանշանի կոնդակը, որը ուզում եմ հանձնել իրեն այս պահին: Մեր Եկեղեցվո կարևոր աղոթքների մեջ մի արտահայտություն կա «Երանի նրանց, ովքեր եկեղեցի են շինում» կամ կառուցում: Ահավասիկ պրն. Ջիլավյան այդպիսի եկեղեցի շինող անձնավորություն է, բարի քրիստոնյա:

Ես կուզեի խոսք ասել թեմական առաջնորդ Տ. Տիրան եպիսկոպոսին, որ ղեկավարն է անշուշտ ամբողջ այս եկեղեցական կազմակերպության Ռուսաստանում: Բացառիկ եռանդով մոտ 20 տարի է, աշխատում է այստեղ, լավագույն եղբայրական հարաբերություններ է պահում Ռուս Պրավոսլավ Եկեղեցու հետ: Նա միշտ որդիական ակնածանքով մոտենում է Ռուսաց Պատրիարքի ձեռքը համբուրելու համար: Եվ գնահատելով իր այս եկեղեցաշեն գործունեությունը այս կոնդակով շնորհում եմ իրեն արքեպիսկոպոսության տիտղոսը: Ուրեմն հետ այսու Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդը ոչ թե Տիրան եպիսկոպոսն է, այլ Տիրան արքեպիսկոպոսը: Եվ որովհետև լայն ասպարեզ է բացվում այս նոր պայմաններում եկեղեցական կյանքի զարգացման, ես նպատակահարմար եմ գտնում և եթե Նորին Սրբությունն էլ իր հավանությունը տա, որ Տիրան սրբազանին նշանակեմ նաև Հայրապետական Պատվիրակ Ռուս Պրավոսլավ Եկեղեցու մոտ:

Մաղթում եմ ձեզ բոլորիդ քաջառողջություն, արևշատություն և Աստուծո օրհնությունը ձեր բոլոր բարի, ազնիվ և արդար գործերի առաքելության համար. ամեն:

Ապա խոսք առավ Ռուսաց Պատրիարք Ալեքսի Բ-ը և ջերմ խոսքեր ողղեց Վեհափառ Հայրապետին, Հայ Եկեղեցուն ու ժողովրդին:

ԱԼԵՔՍԻ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԽՈՍՔԸ

Հարգարժան տիարք և տիկնայք.

Սրտանց շնորհակալություն եմ հայտնում Հայ Առաքելական Եկեղեցու Սրբազան Հովվապետին՝ բարի խոսքերի համար, որ ասվեցին Ռուս Ուղղափառ Եկեղեցու հասցեին, մեր երկու Եկեղեցիների ավանդական հարաբերությունների մասին:

Այս օրը պատմական մեկ էջ է դառնում մեր երկու Եկեղեցիների հարաբերություններում: Այսօր մենք վերլուծեցինք այն բոլոր ավանդական, եղբայրական առնչությունները, որոնք գոյություն են ունեցել, ունեն և ըստ մեր ընդհանուր համոզվածության պիտի գոյություն ունենան մեր երկու Եկեղեցիների միջև հետագայում ևս:

Դեռևս ԺԲ դարում Ներսես Շնորհալի Կաթողիկոսը հիշատակել է Ռուս Եկեղեցին: ԺԲ դարից արդեն գոյություն են ունեցել կապեր՝ Հայ և Ռուս Եկեղեցիների միջև: Եվ այս դժվարին ժամանակներում, որ մենք ապրում ենք, մեր հանդիպումը կայացավ շնորհիվ Ռուսաստանի և Նոր Նախիջևանի թեմական առաջնորդի, հնարավորություն տվեց եղբայրական հաղորդակցության և կոչի՝ ողղյալ հեռավորներին, մերձավորներին, մեր Եկեղեցու հավատացյալներին, քաղաքացիներին, մեր պետություններին՝ պահպանելու մշակութային և հոգևոր արժեքներն ու կապերը, որոնք գոյություն են ունեցել այս երկու երկրների միջև:

Ես սրտանց շնորհավորում եմ Տիրան Սրբազան Հորը՝ արքեպիսկոպոսի պատվավոր կոչում ստանալու և Ռուս Եկեղեցուն կից Հայ Եկեղեցու մշտական ներկայացուցիչ նշանակվելու առթիվ: Համոզված եմ, որ դա կլինի կարևոր մի քայլ, ամուր, եղբայրական հարաբերություններում մեր երկու Եկեղեցիների միջև, որոնք պետք է խորացնել, զարգացնել՝ անտեսելով նախկինում եղած ամեն տեսակի տարաձայնությունները, հակամարտությունները ու անհանդուրժողությունը:

Մեր Ս. Եկեղեցիները եղբայրական հարաբերություններով օրինակ պետք է հանդիսանան և ոգևորեն հավատացյալ ժողովրդին՝ հոգևոր և մշակութային համագործակցության և փոխըմբռնման այն համակարգում, որ միավորում է մեզ:

Ձերդ Սրբություն.

Շնորհակալություն Ձեզ Ձեր աշխատանքի համար, որ կատարվեցին Ռուսաստանի և Նոր Նախիջևանի թեմ կատարած այցի ընթացքում, որը հնարավորություն տվեց մեզ անձնապես շփվելու որպես երկու եկեղեցիների հովվապետեր՝ այս շքեղ ու անկրկնելի ընդունելության պահին:

Կարծում եմ, որ սա կլինի ընդհանուր ներդրում եղբայրության և բարեկամության ամրապնդման և փոխըմբռնման գործում, ոչ միայն հայ և ռուս, այլև նախկին ԽՍՀՄ ազգերի միջև:

Այստեղ ներկա են բազմաթիվ դիվանագետներ և կարծում եմ փոխըմբռնումը և համագործակցումը շուտով կտարածվեն աշխարհի շատ երկրներում:

Շնորհակալություն այս հաղորդակցության համար, շնորհակալություն այս հանդիպման համար և շնորհակալություն Ձերդ Սրբությանը՝ Տիրան արքեպիսկոպոսին Ռուս Եկեղեցում մշտական ներկայացուցիչ նշանակվելու համար, որը կլինի կենդանի կապ մեր երկու Եկեղեցիների միջև:

Այնուհետև Սմոլենսկի և Կալինինգրադի միտրոպոլիտ Կիրիլը ընթերցեց երկու հովվապետերի հայտարարությունը:

Ընդունելությունն ունեցավ նաև իր գեղարվեստական հայտագիրը:

22 հունվար, ուրբաթ

Առավոտյան ժամը 10-ին Վեհափառ Հայրապետը Մոսկվայի քաղաքապետի հրավերով քաղաքապետարանում պաշտոնական հանդիպում ունեցավ Մոսկվայի քաղաքապետ Յուրի Լուժկովի հետ: Հանդիպմանը ներկա էին գերշ. Տ. Տիրան արքեպիսկոպոս Կյուրեղյանը, գերշ. Տ. Պարգև եպիսկոպոս Մարտիրոսյանը, Տ. Եզնիկ վրդ. Պետրոսյանը, պրն. պրն. Լյուդվիգ Խաչատրյանը և Սերժ Ջիլավյանը: Հանդիպման ժամանակ Վեհափառ Հայրապետը խոսքով դիմեց քաղաքապետին:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ՄՈՍԿՎԱՅԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆՈՒՄ

Ես Հայաստանում գտնվում եմ իբրև Կաթողիկոս 37 տարիներից ի վեր, ընտրվեցի և եկա Ռումինիայից: Ես ռումինացի հայ եմ, այնտեղ ծնված, այնտեղ մեծացած և այս 37 տարիների իմ պատրիարքական կյանքում, այսօրվա իմ հանդիպումը բացառիկ իրադարձություն է, որ ինձ ընդունում է Մոսկվա մեծ քաղաքի քաղաքապետը. սա մեծ պատիվ է, ոչ միայն ինձ համար, այլ նաև տարածվում է ողջ Հայ Առաքելական Եկեղեցու և ողջ հայ ժողովրդի վրա: Հայ ժողովուրդը շուրջ 4 միլիոն ապրում է Հայաստանում, 2 միլիոն և մի քիչ ավելի նախկին Սովետական Միության հանրապետություններում՝ մեծավ մասամբ Ռուսաստանի ֆեդերացիայում, Վրաստանում: Եվ վերջապես արտասահմանի սփյուռքը Եվրոպա, Ամերիկա և Մերձավոր

Արևելք, որտեղ էլի մոտավորապես երկու միլիոն հայ է ապրում: Մեծագույն արտասահմանի մեր գաղութը Միացյալ Նահանգների մեջ է, ուր մեկ միլիոն հայ կա: Եկեղեցական-կրոնական տեսակետից ամբողջահայ հայությունը հոգևոր իմաստով կապված է Ս. Էջմիածնի հետ: Ինչպես գիտեք, Ս. Էջմիածինը հիմնված է Դ դարու սկզբին, տևական պատմական կենտրոնն է հայ քրիստոնյաների: Այնպես որ թույլ տվեք ողջ հայ ժողովրդի և Եկեղեցու անունով իմ գոհունակությունը հայտնել այս առիթով: Մեծ գնահատանքով լսեցի ձեր խոսքերը, ձեր մտածումները, ձեր խոհերը և ապագայի նկատմամբ ունեցած երազանքները: Հատկապես թույլ տվեք գնահատել ձեր ապաստումները և գնահատումները կրոնի և Եկեղեցու վերաբերյալ, հոգևոր կյանքի վերաբերյալ:

Անշուշտ խորհրդային ռեժիմի շրջանում Եկեղեցիները սահմանափակ գործունեության դաշտ ունեին: Հիմա լրիվ փոխված է վիճակը և նաև եկեղեցական իմաստով լայն գործունեության ճանապարհ է բացվել, որն իմ կարծիքով, անշուշտ կրոնական հոգևոր նշանակություն ունի, ինչպես նաև ընկերային բարոյական, նույնիսկ որոշ չափով քաղաքական նշանակություն: Հայ Եկեղեցին պատրաստ է այդ պարտականությունն իր ուսերի վրա վերցնելու: Եվ այդ գործում մեզ նեցուկ են կանգնել մեր հայ հավատացյալ ժողովուրդը և եկեղեցական կենտրոնները արտասահմանում: Պետք է ասեմ հաստատ կերպով, որ Արևմուտքի մեջ ապրող երկու միլիոն հայերը բացառիկ կարևորությամբ հետևում են նախկին Խորհրդային Միության երկրների ճակատագրին: Անշուշտ նրանք առաջին հերթին մտահոգված են Հայաստանի կացությամբ, որ ինչպես գիտեք, շատ ծանր վիճակի մեջ է այսօր՝ ջեռուցում չկա, լույս չկա, բավարար սննդամթերք չկա, հատկապես բլոկադայի հետևանքով: Բայց այդ բոլոր դժվարությունները հայ ժողովուրդը տանում է այն հույսով, որ կանցնեն այս օրերը և հետզհետե ավելի կայուն կացություն կստեղծվի, և տարբեր տեսակի հարցերը կլուծվեն խաղաղությամբ: Եվ մեր ժողովուրդը հավատում է, որ Ռուսաստանի ֆեդերացիայի հետզհետե բարգավաճումը երաշխիք է Հայաստանում վիճակի կայունության:

Ես կուզեի շնորհակալություն հայտնել նաև Ձեր որոշումի համար, որ Մոսկվայում ուզում եք տրամադրել որոշ հողամաս, ուր պետք է կառուցվի հայոց նոր եկեղեցին: Ձեր այս որոշումը հույսի մեկ ավետիս է ոչ միայն Մոսկվայի հայության, այլ նաև Հայաստանի և ողջ հայության համար: Եվ այս առիթով կուզեի Ձեր ուշադրությանը հանձնել, որ Ռուսաստանի Հայ Եկեղեցու կազմակերպության գործում կարևոր է անշուշտ Մոսկվայի եկեղեցու կառուցումը, ինչպես նաև Հայ և Ռուս Պրավոսլավ Եկեղեցու հարաբերության առումով:

Մենք երեկ Ալեքսի Պատրիարքի հետ հանդիպումի ժամանակ միասին որոշեցինք, որ Հայ Առաքելական Եկեղեցին, Ս. Էջմիածինը իր մնայուն ներկայացուցիչը ունենա Ռուս Պրավոսլավ Եկեղեցու մոտ. այդ ներկայացուցիչը կլինի Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ՝ Տ. Տիրան արքեպս. Կյուրեղյանը: Եվ այդ հանգամանքով անշուշտ Տ. Տիրան արքեպիսկոպոսը որպես ներկայացուցիչ կարիք կունենա Մոսկվայում մի փոքրիկ շենքի, ուր կարողանա իր ներկայացուցչությունը հաստատել: Թերևս հնարավորություն լինի մոտ ապագայում այդ հարցն էլ լուծել, որի համար մենք շնորհակալ կլինենք:

Մեր հարաբերությունները Ռուս Պրավոսլավ Եկեղեցու հետ միշտ սքանչելի են եղել դարեր շարունակ: Պետք է ասել նաև խորհրդային շրջանին: Ես թանկագին հիշատակներ ունեմ Ալեքսի Ս. Պատրիարքից, որ բացառիկ անձ

նավորություն մըն էր, հետո Պիմեն Պատրիարքի և ապա հիմա Ալեքսի Բ հետ: Հատկապես վերջին երկու-երեք հարյուր տարիների ընթացքում, Հայ Եկեղեցին և Ս. Էջմիածինը նույնիսկ քաղաքական կարևոր դեր կատարած է հայ-ռուս հարաբերությունների զարգացման ճանապարհին: Այո, պատմությունը հայտնի է մեզ և մեր ռուս պրավոսլավ եղբայրներին: Մեզ համար Ռուս Պրավոսլավ Եկեղեցին ներկայացնում է հավիտենական ռուս ժողովուրդը, նաև հայր Զոսիմայի և Ալյոշա Կարամազովի ռուս ժողովուրդը:

Մենք երջանիկ ենք, որ այս նոր շրջանին, Հայաստանի անկախության շրջանին մեր եկեղեցական բարեկամությունն ու հարաբերությունները պիտի զարգանան ավելի մեծ թափով:

Դուք ակնարկեցիք հայ ժողովրդի ներկա դժվարությունների մասին այս շրջանին: Իրապես շատ դժվար է Հայաստանի և հայ ժողովրդի դրությունը: Մենք երախտապարտ ենք, որ դուք հասկանում եք այդ իրականությունը: Մենք նույն այդ դրական տպավորությունն ստացանք մեր նախագահի՝ Լևոն Տեր-Պետրոսյանի այցելության առիթով Մոսկվա, որ վերադարձավ լավատես զգացումներով: Զուգադիպաբար իմ այցելությունը հաջորդեց դրան: Ես անշուշտ Հայաստանի պետությունը չեմ ներկայացնում, բայց ուրախանում եմ հաստատելով այս բարի զարգացումը մեր անկախ հանրապետության և Ռուսաստանի Ֆեդերացիայի միջև: Ես երախտապարտ եմ նաև, որ իմ այցելության առիթով պատիվ ունեցա հանդիպելու նաև Ռուսաստանի Ֆեդերացիայի փոխնախագահ Ռուցկոյի և նորընտիր վարչապետ Չերնոմիրդինի հետ և ամեն տեղ հանդիպեցի նույն բարյացակամ վերաբերմունքին:

Ահա այն մտածումներն ու զգացումները, որ ես ունեմ այս պահին՝ մեր այս հանդիպման առիթով: Շնորհակալություն եմ հայտնում Ձեզ և մաղթում եմ Ձեզ քաջառողջություն և նորանոր հաջողություններ, որով պիտի կարողանաք մեծ Ռուսաստանի մայրաքաղաք Մոսկվան հասցնել իր փառավոր բարձունքին:

Հանդիպման ընթացքում քաղաքապետը պաշտոնապես հայտնեց Հայաստանին օգնելու իր պատրաստակամությունը և Մոսկվայում հայկական նոր եկեղեցի կառուցելու համար հողի հատկացումը.

ՄՈՍԿՎԱՅԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՅՈՒՐԻ ԼՈՒԺԿՈՎԻ ԽՈՍՔԸ

Ձերդ Սրբություն,

Ես ուրախ եմ ողջունելու Ձեզ Մոսկվայի այս հնագույն դահլիճում և ասելու, որ մոսկվացիները ճանաչում են Ձեզ ոչ միայն Հայ Եկեղեցու հովվապետի, այլ նաև որպես միջազգային հասարակական և մշակութային գործիչի վերաբերում են ձեզ մեծագույն հարգանքով:

Համոզված եմ, որ հիմա Մոսկվացիները մեզ հետ միասին ուրախանում են Ձեր այցելության առթիվ: Մեզ մոտ՝ Մոսկվայում, ապրում են մեծ թվով հայեր և մենք մեծ հարգանքով ենք վերաբերվում մեր քաղաքացիներին՝ մոսկվաբնակ հայերին, որոնք աշխատում և ստեղծագործում են մեզ հետ մեր քաղաքում: Դրանք մտքի մարդիկ են, տաղանդավոր, որոնցից շատերը ավելացրել են Մոսկվայի, Ռուսաստանի փառքը, այստեղ ստեղծագործում են նկարիչներ, դերասաններ, գիտնականներ, հասարակական գործիչներ և մենք հպարտանում ենք նրանցով՝ մոսկվաբնակ հայազգի տաղանդներով,

որոնց գործունեությունը իր ուրույն տեղն ունի Մոսկվայի մշակութային-գիտական ոլորտում:

Վերջին ժամանակներս կապված հասարակական, տնտեսական գործընթացների հետ, որոնք տեղի են ունենում Ռուսաստանում, Մոսկվայում, ի հայտ են գալիս նոր անհատներ, բիզնեսմեններ, բանկիրներ, կոմերսանտներ, որոնք իրենց ներդրումն են ունենում այդ գործի ընդհանուր բարեկարգման մեջ: Ես կարող եմ ասել, որ այսօր շատ կարևոր է հոգևոր վերազարթոնքը: Մեր հասարակության հոգևոր վիճակը այսօր համարյա կորած է նախկինում Կոմկուսը իր վրա էր վերցրել հասարակության հոգևոր վիճակի պարտավորությունը և մենք այսօր քաղում ենք այդ պատասխանատվության պտուղները՝ փլուզված հոգևոր աշխարհ, ինքնասիրություն, և հատկապես ազգային ինքնասիրության կորուստը և կենցաղավարության և շատ ուրիշ արժանիքների ոտնահարում: Այսօր ես հոգևոր վերազարթոնքի հնարավորությունը կապում եմ կրոնի հետ: Դա ոչ միայն ուղղափառություն է, որը մեծագույն տեղ է գրավում Մոսկվայի կրոնական համայնքներում, այլ նաև մյուս կրոնները ու կրոնական համայնքները, իսկ այդպիսիք Մոսկվայում գրանցված են 27-ը: Այդ 27 տարբեր կրոնական կազմակերպությունները պետք է աջակցություն ստանան Մոսկվայի քաղաքային իշխանություններից: Բայց և այնպես մենք հասկանում ենք, որ առաջնահերթությունը պետք է տրվի ուղղափառությանը, մյուս կրոնների նկատմամբ և առանձնահատուկ ուշադրություն ենք դարձնում նրան: Ուղղափառությունը շատ մոտ է նաև Հայ Առաքելական Եկեղեցուն և այս երկու Եկեղեցիների հարազատությունը մեզ համար ստեղծում է լավատեսական և ամուր կապերի հնարավորություններ: Կապեր Ձեր ղեկավարած Եկեղեցու և Ձերդ Սրբության հետ:

Ձերդ Սրբություն: Հանուն մեր երկու Եկեղեցիների եղբայրական կապերի ամրապնդման, և հանուն միացյալ ուժերով հոգևոր զարթոնքի խթանելու և երկրի վրա խաղաղություն ստեղծելու՝ Մոսկվայի քաղխորհուրդը որոշել է Հայ Առաքելական Եկեղեցուն Ռուսաստանի և Նոր Նախիջևանի թեմին Մոսկվա քաղաքում հողատարածք հատկացնել մի շքեղ և մեծ եկեղեցի կառուցելու համար: Համոզված եմ, որ այդ եկեղեցին կլինի երկու Եկեղեցիների և ժողովուրդների դարավոր բարեկամության ևս մեկ գրավականը:

Ուրախ եմ, Ձերդ Սրբություն, որ Տիրան արքեպիսկոպոս սրբազան հորը նշանակել եք մշտական ներկայացուցիչը Ձեր Եկեղեցու, դրանով էլ մեզ հնարավորություն տվել նրա միջոցով մշտապես հաղորդակից լինելու Ձեզ ու Ձեր ղեկավարած Եկեղեցու և ազգի հետ:

Ժամը 13-ին Վեհափառ Հայրապետը այցելեց Հայաստանի Հանրապետության ներկայացուցչություն, որտեղ հանդիպում ունեցավ Սերժ Ջիլավյանի անվան գիմնազիայի սաների և նրանց ուսուցիչների հետ: Հանդիպմանը մասնակցում էին նաև հիմնադիր պրն. Սերժ Ջիլավյանը, տնօրեն պրն. Էդվարդ Ջիլավյանը, Մոսկվայի հայ համայնքի ներկայացուցիչներ և սաների ծնողներ:

Հայոց Հայրապետը Ս. Էջմիածնից բերված իր օրհնությունը բաշխեց ներկաներին, բարձր գնահատեց հայ համայնքի գործունեությունը՝ մանավանդ հայապահպանման ևս մեկ կրթօջախ հիմնելու առնչությամբ:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ «ՍԵՐԺ ՋԻԼԱՎՅԱՆ» ԳԻՄՆԱԶԻԱՅՈՒՄ

Ինձ համար այս պահը չափազանց հուզիչ է և նշանակալից: Սկզբից ես չէի նախատեսում այս հանդիպումը: Ինչպես գիտեք այս անգամ ես եկա Մոսկվա մեր թեմական առաջնորդի և պրն. Սերժ Ջիլավյանի հրավերով՝ մեր Եկեղեցու հարցերով և պաշտոնական այցելությունների համար, որոնք տեղի ունեցան շատ լավ պայմաններում: Բայց այսօր այստեղ բացառիկ պահ եմ ապրում այս Հայկական ներկայացուցչության հարկի տակ և ձեր ներկայությամբ, որ հավաքված եք իբրև սաները «Սերժ Ջիլավյան» գիմնազիայի: Նրա անվամբ հիմնված այս հաստատությունը հանդիսանում է «Լազարյան» ճեմարանի շարունակությունը մեր օրերին: Ես նախ և առաջ կուզեի իմ ողջույնը և օրհնությունը բերել պրն. Ջիլավյանին՝ հիմնադիրին այս հաստատության, տնօրենին պրն. Էդվարդ Ջիլավյանին և ուսուցչական կազմին, բոլոր հյուրերին, որոնք այստեղ են գտնվում, պաշտոնեության և մեր սիրելի սաներին: Կրկին անգամ Աստուծո օրհնությունը բոլորիդ Ամենայն Հայոց Մայր Աթոռ Ս. Էջմիածնից:

Սիրելի երեխաներ, դուք գիտեք, թե ես ով եմ, արդեն ձեր արտասանությունները ցույց տվեցին: Դուք գիտեք, թե ինչ է նշանակում Ս. Էջմիածին, որ համայն հայ ժողովրդի, համայն հայ հավատացյալների հոգևոր կենտրոնն է՝ և՛ Հայաստանի հայերի, և՛ Ռուսաստանի հայերի, և՛ ամբողջ աշխարհի հայերի:

Հայությունն այսօր իր տվով երևի մոտենում է տասը միլիոնի, որից մոտ չորս միլիոնը բնակվում են մեր Մայր Հայրենիքում, այսօր հռչակված մեր անկախ հայկական պետության երկնքի տակ: Շուրջ երկու միլիոն և գուցե ավելին բոլոր նախկին Խորհրդային Միության հանրապետություններում, իսկ նրանց մեծ մասը բնակվում է Ռուսաստանյան Ֆեդերացիայում, Վրաստանում և այլ հանրապետություններում, և ավելի քան երկու միլիոն ցրված են ամբողջ աշխարհում՝ Մերձավոր Արևելքում, Եվրոպայում և Ամերիկաներում, մեծ մասը Հյուսիսային Ամերիկայում՝ Միացյալ Նահանգներ և Կանադա, ավելի քան մեկ միլիոն: Անա այս համայն աշխարհի հայության հոգևոր կենտրոնը հանդիսանում է Մայր Աթոռ Ս. Էջմիածինը աշխարհի ամենահնագույն քրիստոնեական սրբատեղիներից մեկը՝ հիմնված Դ դարու սկզբին:

Մեզ համար, մեր հայ ազգի համար մեծ հպարտություն է, որ աշխարհի վրա առաջին ժողովուրդը, որ պաշտոնապես ընդունեց քրիստոնեությունը իբրև ազգային կրոն, մեր ժողովուրդն է: Եվ առաջին թագավորը, որ քրիստոնյա մկրտվեց, Հայոց Տրդատ թագավորը եղավ 301—303 թթ.: Շուրջ տասը տարի հետո է, որ Հռոմեական թագավորության կայսրը, Կոստանդիանոս թագավորը, հռչակեց քրիստոնեությունը ազատ կրոն Հռոմեական կայսրության տարածքի վրա, բայց ոչ պաշտոնական կրոն և ինքը՝ Կոստանդիանոս կայսրը չմկրտվեց անմիջապես, այլ հազիվ մի 10—12 տարի հետո ինքն էլ անձնապես իր ընտանիքով մկրտվեց քրիստոնյա:

Անա պատմական այս իրողությունը մեր փոքրիկ ազգի համար հպարտության առիթ է ոչ միայն մեզ համար, այլ համայն քրիստոնյա աշխարհի համար: Բոլոր քրիստոնյաները ընդունում են այս իրողությունը և հարգում են մեր Եկեղեցին:

Անավասիկ աստվածային օրհնությունը ես բերում եմ ձեզ բոլորիդ Մայր Աթոռ Ս. Էջմիածնից: Այսօրվա ազգային նոր կյանքի՝ ազատագրված Հա-

յաստանի, անկախ Հայաստանի պայմաններում լայն գործունեության հորիզոն է բացվել նաև Հայաստանյայց Եկեղեցու առջև իբրև դաստիարակ, մայր դաստիարակը մեր ժողովրդին, իբրև ազգային հնագույն կրոնական հաստատությունը հայ ազգի, և իբրև պատմության ընթացքին բոլոր հայկական ազգային հարազատ իդեալներին: Հայաստանյայց Եկեղեցին միակ հայկական ազգային Եկեղեցին է հայ ժողովրդի համար: Եվ ես երջանիկ եմ, որ նաև ձեր գիմնազիայի հարկի տակ դուք պիտի մեծանաք, զարգանաք իբրև Հայաստանյայց Եկեղեցվո հավատացյալներ, իբրև քրիստոնյաներ և դառնաք ապագային հայ ազգի պարծանք զավակները լինի Հայաստանում, լինի Ռուսաստանում կամ այլ տեղ աշխարհի վրա: Ամեն տեղ, որտեղ հայկական վարժարան կա ստեղծված, Հայ Եկեղեցու կողքին եղել է հայկականության խարիսխը, վեմը, որի վրա հենվում է մեր ազգային գոյությունը, մանավանդ Սփյուռքի պայմաններում:

Մեր Եկեղեցին եղբայրական բարի հարաբերությունների մեջ է աշխարհի բոլոր Եկեղեցիների հետ: Դուք երևի արդեն գիտեք, որ Ժնև քաղաքում՝ Շվեյցարիայում, գտնվում է աշխարհի բոլոր Եկեղեցիների կենտրոնը: Մի տեսակ մանրանկարը եթե ուզեք Միացյալ Ազգերի Կազմակերպության: Այնպես, ինչպես քաղաքական մակարդակի վրա աշխարհի բոլոր երկրների ներկայացուցիչները կազմում են Միացյալ Ազգերի Կազմակերպությունը, այնպես էլ կրոնական մակարդակի վրա աշխարհի բոլոր քրիստոնյա Եկեղեցիները համախմբված և միավորված են իրենց ներկայացուցիչներով Ժնև քաղաքում և այդ Կենտրոնը կոչվում է Եկեղեցիների Համաշխարհային Խորհուրդ: Այդ կենտրոնին մաս է կազմում նաև Հայ Առաքելական Եկեղեցին ավելի քան 30 տարիներից ի վեր: Այդ եկեղեցական կազմակերպությունը հիմնվեց պատերազմից հետո: Մեր Եկեղեցին կարևոր դիրք ունի այնտեղ: Կենտրոնական վարչության մեջ այնտեղ երկու ներկայացուցիչներ ունենք մենք մշտական: Ամբողջ քրիստոնյա աշխարհը ճանաչում է մեզ, ճանաչում է, թե ովքեր են հայերը և ինչ արժեք ունի Հայաստանյայց Եկեղեցին:

Մենք սիրալիր եղբայրական հարաբերություններ ունենք մեր պատմական բոլոր մեծ Եկեղեցիների հետ. Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցու հետ, Օրթոդոքս Եկեղեցիների հետ, Անգլիական Եկեղեցու հետ և էլի ուրիշ բազմաթիվ այլ Եկեղեցիների հետ: Անշուշտ նաև Ռուս Պրավոսլավ Եկեղեցու հետ: Ռուս Պրավոսլավ Եկեղեցու հետ մեր հարաբերությունները մասնավոր կարևորություն և նշանակություն ունեն այն հիմքի վրա, որ մի քանի դարերից ի վեր այդ եղբայրական հարաբերությունները բարվոք զարգանում են մեր Եկեղեցիների միջև, և դա իր բարերար ազդեցությունն ունեցել է ոչ միայն զուտ կրոնական մակարդակի վրա, ոչ միայն եկեղեցական տեսակետից, այլ նաև մշակութային, ազգային և նույնիսկ քաղաքական:

Ես կարծում եմ, որ այսօր երբ խորհրդային իշխանության շրջանը վերջ գտավ և ազգային հանրապետություններն իրենց անկախությունը նվաճեցին, այդ թվում նաև Հայաստան՝ մեր Մայր Հայրենիքը, հորիզոնը առավել լայն բացվեց մեր երկու Եկեղեցիների գործակցության համար այս անկախության պայմաններում: Իմ կարծիքով ճշմարիտ բարեկամություն կարող է զարգանալ ժողովուրդների միջև, եթե երկուսն էլ անկախ պետություններ են: Եվ ահա այդ իրավիճակը հաստատված է հիմա, և մեր երկրների անկախության պայմաններում, իբրև հավասարը հավասարի պետություններ Ռուսաստանի Հանրապետության հետ, նաև մեր Եկեղեցիները պատմության մեջ, մեր ժողովուրդների գործակցության պատմության մեջ նոր էջ պիտի բանան: Եվ իմ

այս անգամվա այցելությունը Մոսկվա նաև այդպիսի բնույթ ստացավ: Ես երեկ առիթն ունեցա հանդիպելու Նորին Սրբություն Ալեքսի Բ Պատրիարքի հետ և այդ հարցերի շուրջ կարծիքների փոխանակում ունեցանք, որոնք լրիվ համընկնում էին: Ստորագրեցինք մի համատեղ հայտարարություն մեր երկու Եկեղեցիների հետագա առավել գործակցության համար: Մի հայտարարություն, որտեղ ցանկություն հայտնեցինք և մաղթանք, որ դարաբաղյան ողբերգական հարցը շուտով լուծվի խաղաղ և արդար սկզբունքների հիման վրա:

Անա թե ինչպես պատմությունը շարունակվում է նույն ճանապարհով: Մեր երկու Եկեղեցիները իրենց նպաստն են ուզում բերել մեր ժողովրդի՝ հայ ժողովրդի ազգային արդար իղձերի ճանապարհին: Անավասիկ մտորումներ, որոնք մեզ ոգևորում են այս առիթով և ուզեցի ձեզ բաշխել, ձեզ ծանոթացնել այս բոլորի մասին: Եվ իմ խոսքը վերջացնում եմ կրկին իմ օրհնությունը բերելով մեր այս գիմնազիայի հիմնադրին և նրա բարերարին՝ պրն. Սերժ Ջիլավյանին, դասախոսական կազմին, պաշտոնեության և մանավանդ ձեզ սիրելի երեխաներ: Աստված ձեզ պահի պահպանի քաջառողջ: Ուրիշ առիթներով, եթե ես Մոսկվա գտնվեմ, կուզենայի ձեզ հանդիպել, գուցե ապագային նոր կառուցված շենքի մեջ և իմ օրհնությունը բերելու Մայր Աթոռ Ս. Էջմիածնից:

«Օրհնեալ եղերուք ի շնորհաց Ս. Հոգւոյն այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն»:

Նույն օրը, երեկոյան ժամը 20-ին, Վեհափառ Հայրապետը հանդիպում ունեցավ Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմի Թեմական Խորհրդի անդամների հետ:

23 հունվար, շաբաթ

Առավոտյան ժամը 11-ին Վեհափառ Հայրապետը պրն. Սերժ Ջիլավյանի առանձնատանը Ալեքսի Բ Պատրիարքի պատվին ընդունելություն և ճաշկերույթ տվեց: Ճաշի ժամանակ տեղի ունեցան ճառերի փոխանակում:

Պարոն Սերժ Ջիլավյանը, ստանալով երկու Եկեղեցիների հովվապետների համաձայնությունը, փափագ հայտնեց Մոսկվայի ռուսական եկեղեցիներից մեկում ստեղծել Հայ և Ռուս Եկեղեցիների բարեգործական միություն:

Կայացավ նաև հանդիպում Օստանկինոյի հեռուստաընկերության թղթակիցների հետ:

Նույն օրը, ժամը 14-ին, Մոսկվայի հայկական Սուրբ Հարություն եկեղեցում Վեհափառ Հայրապետը հանդիպում ունեցավ հայ հավատացյալների հետ և իր օրհնությունը բաշխեց նրանց: Կատարվեց նաև Երեկոյան ժամերգություն:

Ժամը 16-ին Վեհափառ Հայրապետը «Շերեմետևո-1» օդանավակայանում հարցազրույց ունեցավ կենտրոնական հեռուստատեսության թղթակիցների հետ և լուսաբանեց իր հովվապետական այցելությունը ի Մոսկվա: Ապա, հրաժեշտ տալով ամենքին, վերադարձավ Հայաստան: